ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/821-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-763-14.10.2020-ՎՖ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1355 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-763-14.10.2020-ՎՖ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ հայտնում է հետևյալը:

Նախաձեռնությունն ընդհանուր առմամբ հիմնավորվում է նրանով, որ «սպառողների իրավունքների պաշտպանության համար «300.000 դրամների գանձման» ինստիտուտը ենթարկվել է փոփոխության, ըստ որի՝ միայն խախտման փաստի ուժով սպառողն այդ գումարը չի կարողանալու ստանալ, և սա բերում է ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պատասխանատվության միջոցների խստացման անհրաժեշտության»: Սակայն գտնում ենք, որ նշված հիմնավորումը չի կարող բավարար դիտարկվել սույն մասով պատասխանատվությունը բազմապատիկ խստացնելու համար: Քանզի որևէ իրավախախտման համար նախատեսված պատասխանատվության վերացումը կամ մեղմացումը ինքնին չի կարող բավարար հիմնավորում լինել այլ իրավախախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցների խստացման համար:

Այս առումով հարկ է նշել, որ տուգանքների չափերը սահմանելիս անհրաժեշտ է պահպանել համաչափության սկզբունքը, որն իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկն է և պետության պոզիտիվ պարտականությունը, որը պետք է իրացվի ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության ընթացքում: Մեր կողմից քննարկվող իրավիճակում առկա է թույլ տրված խախտման և դրա համար կիրառվող տուգանքի համաչափության խնդիր: Տուգանքի սահմանման օրինական ակնկալիքը չի կարող լինել միայն սուբյեկտին պատասխանատվության ենթարկելը, այլ նաև պարտավորության պատշաճ կատարմանը հասնելը և հետագայում պարտավորության խախտման դեպքերը կանխելը: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նշել է. «համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև» (ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի ՍԴՈ-924 որոշում): Նշվածից ելնելով՝ գտնում ենք, որ ցանկացած հակահիրավական

արարքի համար պատասխանատվության միջոց ու չափ նախատեսելիս նախ և առաջ անհրաժեշտ է համոզվել, որ դրանք հնարավորություն են տալու հասնելու պատասխանատվության նպատակների իրականացմանը:

Վերոնշյալ նկատառումների առումով նախագիծը համաչափության սկզբունքի տեսանկյունից վերանայման կարիք ունի:

Նշված դիտարկումը վերաբերում է նաև «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին:

Միաժամանակ առաջարկում ենք.

1. «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում անհրաժեշտ է լրացնել հոդվածի վերնագիրը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթները, որոնց համաձայն՝ օրենսդրական ակտի հոդվածներն ունենում են վերնագրեր (...):

Այս դիտողությունը վերաբերում է նաև «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի 1-ին հոդվածներին:

2. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը համարակալել՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջների:

3. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայել:

Այս դիտողությունը վերաբերում է նաև «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին:

14.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2020 թվականի N 1359-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանին (համաձայնությամբ) նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-763-14.10.2020-ՎՖ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-763-14.10.2020-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկային ավանդների ներգրավման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-124-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«1. Բանկի կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում՝

1) մեկ անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով.

2) երկու անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ մեկ միլիոն դրամի չափով.

3) երեք եւ ավելի անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ երկու միլիոն դրամի չափով:

2. Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի վճռով այն դեպքում, երբ բանկը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Տուգանքը գանձվում է՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների:

3. Սույն օրենքի կիրառման նպատակով սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված այլ ակտերի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է առանձին խախտում:

Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները Կենտրոնական բանկը կիրառում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքով սահմանված չափով պատասխանատվության միջոցները կիրառվում են, եթե խախտումը տեղի է ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, իսկ սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման առումով խախտումների քանակը սկսվում է հաշվվել (խախտման հաշվարկի սկիզբը սկսվում է), եթե խախտումը տեղի է ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-763[1]-14.10.2020-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» 2017 թվականի հոկտեմբերի 25-ի ՀՕ-182-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«1. Կրեդիտավորողի կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում մեկ անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Կրեդիտավորողի կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում երկու անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ մեկ միլիոն դրամի չափով:

3. Կրեդիտավորողի կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում երեք եւ ավելի անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ երկու միլիոն դրամի չափով.

4. Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի վճռով այն դեպքում, երբ կրեդիտավորողը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Տուգանքը գանձվում է՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների:

5. Սույն օրենքի կիրառման նպատակով սույն օրենքի եւ դրա հիման վրա ընդունված այլ ակտերի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է առանձին խախտում:

6. Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները Կենտրոնական բանկը կիրառում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքով սահմանված չափով պատասխանատվության միջոցները կիրառվում են, եթե խախտումը տեղի է ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, իսկ սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման առումով խախտումների քանակը սկսվում է հաշվվել (խախտման հաշվարկի սկիզբը սկսվում է), եթե խախտումը տեղի է ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-763²-14.10.2020-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«1. Կրեդիտավորողի կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում մեկ անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Կրեդիտավորողի կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում երկու անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ մեկ միլիոն դրամի չափով:

3. Կրեդիտավորողի կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում երեք եւ ավել անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ երկու միլիոն դրամի չափով.

4. Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի վճռով այն դեպքում, երբ կրեդիտավորողը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Տուգանքը գանձվում է՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների:

5. Սույն օրենքի կիրառման նպատակով սույն օրենքի եւ դրա հիման վրա ընդունված այլ ակտերի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է առանձին խախտում:

6. Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները Կենտրոնական բանկը կիրառում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքով սահմանված չափով պատասխանատվության միջոցները կիրառվում են, եթե խախտումը տեղի է ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, իսկ սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման առումով խախտումների քանակը սկսվում է հաշվվել (խախտման հաշվարկի սկիզբը սկսվում է) սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

Նախագծերի փաթեթի հիմնական նպատակը բանկերի եւ կրեդիտավորող այլ ֆինանսա-կան կազմակերպությունների մոտ սպառողների իրավունքների պաշտպանության ավելի բարձր մակարդակ ապահովելն է՝ կանխարգելիչ միջոցների խստացման հաշվին:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները.

Այժմ գործող օրենքներով սպառողներին վարկավորման կամ ավանդների ներգրավման գործառույթի իրականացման համար նախատեսված կարգավորումները խախտելու համար սահմանված են ավելի ցածր տուգանքի չափեր՝ առաջին անգամ խախտման համար՝ 100 հազար, երկրորդ անգամ՝ երկու հարյուր հազար, իսկ երեք եւ ավելի խախտման համար՝ 5 հարյուր հազար ՀՀ դրամ: Նշված տուգանքը գանձվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Խնդիրը կայանում է նրանում, որ սպառողների իրավունքների պաշտպանության համար «300 հազար դրամների գանձման» ինստիտուտը ենթարկվել է փոփոխության, ըստ որի «միայն խախտման փաստի ուժով» 300 հազար սպառողը այլեւս չի կարողանալու ստանալ:

Այդ փոփոխությունը բերում է այլ ինստիտուտի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման խստացումների անհրաժեշտության, ինչը կանխարգելիչ գործիք կլինի սպառողների իրավունքների պաշտպանության գործընթացում:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Առաջարկվում է սպառողների իրավունքների պաշտպանության համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցները խստացնել՝ ռիսկերը հավասարակշռելու նպատակով:

4. Կարգավորման առարկան.

Առաջարկվում է սպառողների իրավունքների պաշտպանության համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցները՝ վերանայել հետեւյալ չափե-րով՝

«Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի կամ «Բնակարանային հիպոտե-կային կրեդիտավորման մասին» կամ «Սպառական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի կամ դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ըն-թացքում մեկ անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տու-գանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով, երկու անգամ խախտման համար՝ մեկ միլիոն ՀՀ դրամի չափով, իսկ երեք եւ ավելի խախտման համար՝ երկու միլիոն ՀՀ դրամի չափով: